

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
11 հուլիսի 2002 թ.
Պետական գրանցման թիվ ----02109

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

31 մայիսի 2002 թ.
ք. Երևան

N 13-Ն

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի «ը» կետի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհուրդը **որոշում է.**

Հաստատել քաղաքացիական ծառայողի էթիկայի կանոնները (հավելված):

**Հայաստանի Հանրապետության
քաղաքացիական ծառայության
խորհրդի նախագահ**

Մ. Բաղայան

Կ Ա Ն Ո Ն Ն Ե Ր

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԷԹԻԿԱՅԻ

1. Սույնով սահմանվում են քաղաքացիական ծառայողի էթիկայի կանոնները:
2. Քաղաքացիական ծառայողի էթիկայի կանոնները բարոյականության համընդհանուր սկզբունքների վրա հիմնված, քաղաքացիական ծառայողների վարվելակերպի, վարքագծի և փոխհարաբերությունների առանձնահատկությունները կարգավորող նորմեր են:
3. Քաղաքացիական ծառայողը պարտավոր է պահպանել էթիկայի հետևյալ կանոնները.
 - ա) հարգել Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները (դրոշը, զինանշանը, օրհներգը) և պետական լեզուն.
 - բ) հրապարակայնորեն չընդդիմանալ պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից վարվող քաղաքականությանը.
 - գ) զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են խոչընդոտել պետական մարմնի աշխատանքները կամ վարկաբեկել և հեղինակազրկել նրան.
 - դ) ղեկավարվել մարդասիրության, արդարության և ազնվության սկզբունքների վրա հիմնված բարոյական նորմերով.
 - ե) հարգել մարդու արժանապատվությունը՝ անկախ նրա ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից.
 - զ) հավատարիմ մնալ քաղաքացիական ծառայության պաշտոնի առաջին անգամ նշանակվելիս «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ իր կողմից տրված երդմանը.
 - է) լինել անաչառ, անկողմնակալ, զուսպ և օրինակելի.
 - ը) անհարկի չընդգծել իր պաշտոնական դիրքը.
 - թ) իր բանավոր և գրավոր շփումներում բացառել կոպտության դրսևորումը.
 - ժ) քաղաքավարի լինել պաշտոնատար անձանց, աշխատողների և ֆիզիկական անձանց հետ.
 - ժա) իր վարքով նպաստել հասարակության այն համոզմունքի և հավատի ձևավորմանը և պահպանմանը, որ քաղաքացիական ծառայության համակարգը հիմնված է անկողմնակալության, ազնվության և արդյունավետության գաղափարի վրա.
 - ժբ) խուսափել ցանկացած տեսակի հովանավորչությունից և ծառայության ընթացքում օգտագործել միայն բարոյական միջոցներ՝ նպատակին հասնելու համար.
 - ժգ) իր վարքով իրեն կախվածության մեջ չդնել որևէ անձից.
 - ժդ) խուսափել անհարկի խոստումներից, գիտակցել իր խոսքի արժեքն ու կարևորությունը, տված խոստման հնարավոր բացասական հետևանքները.
 - ժե) չօգտագործել ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում հայտնի դարձած տեղեկատվությունը՝ իր անձնական շահերի համար.
 - ժզ) հարգանքով վերաբերվել այլ ժողովուրդների և ազգերի էթնիկական առանձնահատկություններին, ավանդույթներին և սովորույթներին.
 - ժէ) պահպանել բարոյական նորմերով սահմանված էթիկայի այլ կանոններ:
4. Սույն էթիկայի կանոնների հերթականությունը չի ընդգծում դրանց առաջնահերթությունը: